


ԱՐՄԵՆԻԱ

ԱՐՄԵՆԻԱ
ԱՄՍԱԳԻՐ

ARMENIA

ԲՈՒՂԱՊԵՇՏ
2013. համար 3





«Մենք ենք, մեր լեռները» վերանորոգված



Բարոնուհի Քերոլայն Քոքսը և Աշոտ Բաղդասարյանը



«Արարատից հեռու. հայկական մշակույթը Կարպատյան ավազանում»

ԱՐՄԵՆԻԱ

ԱՐՄԵՆԻԱ
ԱՄՍԱԳԻՐ

ARMENIA

ԲՈՒԴԱՊԵՇՏ
2013 համար 3

4 Պահանջ՝ ի հաստատում արդարության

6 Լեռնային Ղարաբաղի անկախ
հանրապետությունը

8 «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը
Բուդապեշտում

9 «Մենք ենք, մեր լեռները» կապիտալ
վերանորոգված



10 Հայ արվեստագետ Ագարդի Գաբորը

12 Հայաստանի Հանրապետության
անկախության 22-րդ տարեդարձը



13 Յուցահանդես. Լազար Իմուլա

14 «Արարատից հեռու. հայկական
մշակույթը Կարպատյան ավազանում»
գիրքը

15 Խաչվերաց տուն



16 Ադրբեջանցիների հերթական
հիստերիան

17 Ցեց Յանոշ (Հովհաննես Ցեցյան)



19 Հրաժեշտ Մուղովան Կրիշտոֆին

20 Քրիստոնյա ՅՈՒԲԻԿ-ը՝ որպես
ադրբեջանական լոբբի

21 Գուրգեն Մարգարյանի հուշարձանը

22 Ընթացմարտի աշխարհի 2013 թ.
առաջնությունը Բուդապեշտում

«ԱՐՄԵՆԻԱ»

Չրատարակիչ՝ Հայկական Մշակութային Ֆիմնադրամ
Պատասխանատու հրատարակիչ՝ Նիկոլոս Հակոբյան Գլխավոր խմբագիր՝ Սոսի Սուսանյան Խմբագրական կազմ՝
Գայանե Ղորիսմազյան, Հարի Բալաբանյան, Սեդա Քարամյան, Լիլիթ Ղազարյան, Հայկուհի Պետրոսյան, Արեվ Լալայան
Խմբագրության Հասցեն.

Լուսանկարիչներ՝ Հարի Բալաբանյան և Արմեն Ենգոյան
Կոռնետաշ, 1138 Բուդապեշտ, Նեպոլուոդո փողոց 15/С, Հեռ. (36-1) 359-1334, e-mail: kornetas@chello.hu
Հեռ. (0036)70-204-9191, e-mail: n.akopyan@yahoo.com, sousani@armenia.com
Lnyu E տեսնում Հունգարիայի Հայկական Ինքնավարության օժանդակությամբ
Felelős kiadó Az Örmény Kultúraért Alapítvány HU ISSN 1786-5824
www.armenians.hu

ՊԱՀԱՆՁ՝ Ի ՀԱՍՏԱՏՈՒՄ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

Ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտահանվածումից անցել է մեկ տարի, և Հունգարիայի հայկական համայնքը Մեպտեմբերի 3-ին բաց նամակով դիմել է Հունգարիայի արդարադատության նախարար Նավրաչիչ Տիբորին՝ պարզելու վերջինիս գործողություններն այս հարցի վերաբերյալ: Ձեզ ենք ներկայացնում համայնքի փոխնահագահ Նիկողոս Հակոբյանի հարցազրույցը և նամակն ամբողջությամբ:

– Պրն. Հակոբյան, Ռամիլ Սաֆարովի արտահանվածումից անցել է արդեն մեկ տարի, և Հունգարիայի հայկական համայնքը բաց նամակով պահանջ է ներկայացրել արդարադատության նախարար Նավրաչիչ Տիբորին: Կարո՞ղ եք մի փոքր մանրամասնել: – Այո, մենք բաց նամակով խնդրել և պահանջել ենք արդարադատության նախարարից ներկայացնել այն գործողություններն, ինչ որ արվել են մարդասպանին արժանի պատժի ենթարկելու համար: Սկզբում կառավարությունը բողոքի նոտա հղեց Ադրբեջանի դեսպանին: Դա, ըստ երևույթին, կրում էր լուկ ձևական բնույթ, քանի որ չանցած մեկ շաբաթ նույն մարդը ֆուտբոլային ընկերական հանդիպումներ կազմակերպեց Ադրբեջանի հետ, իսկ հոկտեմբերի 4-ից 6-ը տեղի ունեցավ առևտրային մեծ ֆորում: Այս ամենը մեզ ստիպում է հասկանալ կատարված քայլի ողջ ցինիկ ենթատեքստը: – Իսկ համայնքն ու կառավարությունը համագործակցության որևէ օղակ չէ՞ն գտել: – Հունգարիայի կառավարությունը որևէ օգնություն չի ցուցաբերում հայությանը և որևէ կերպ չի աջակցում: Մենք բազմիցս մեր օգնությունն ենք առաջարկել, քանի որ այս բոլոր իրադարձությունների և հարաբերությունների խզման արդյունքում հիմնական տուժողը Հունգարիայում բնակվող հայերն են: Մենք առաջարկել ենք լինել կամուրջ Հունգարիայի և Հայաստանի միջև: Բազմիցս կազմակերպել ենք մշակութային միջոցառումներ, սակայն պատասխան քայլ չենք ստացել: Դե պարզ է. Հունգարիան չի ցանկանում վտանգել իր և եղբայր պետության Թուրքիայի հարաբերությունները: Հստակ գիտենալով Հունգարիայի հայկական համայնքի՝ Հայոց Ցեղասպանության և Ղարաբաղի անկախության ճանաչման հետ կապված պահանջը՝ խուսափում են հայերի հետ հանդիպումներից և փորձում

տարբեր դիվանագիտական հնարքներով մեղմել: – Ի՞նչն է պատճառը, որ կառավարությունը չի ընդունում ձեր օգնությունն ու չի աջակցում: – Քանի որ Սաֆարովյան հարցից հետո «հայ» բառն իրենց համար արգելք է դարձել: Չեն ցանկանում համագործակցել և խուսափում են մեզանից, քանի որ մենք մշտապես հիշեցնում ենք իրենց խայտառակությունը, ինչն իրենք այդքան ուզում են մոռանալ: Ինչպես գիտենք, հաջորդ տարի տեղի են ունենալու պառլամենտական ընտրությունները, և այս հարցը մեծ ազդեցություն կունենա: – Փաստորեն անցել է մեկ տարի, սակայն Սաֆարովյան հարցը դեռևս թարմ է... – Պետք է նշեմ, որ այս հարցը Հունգարիայի հայության համար վերածվել է ավելի լուրջ հիմնահանդրի, քանի որ այն սկսել է խոչընդոտել տեղի հայության գործունեությանը նաև առօրյա կյանքում: Հիշե՛նք, թե ինչ տեղի ունեցավ Բալատոնֆյուրեդ քաղաքում միջոցառման ժամանակ: Նման քայլերով Հունգարիայի որոշ քաղաքական գործիչներ թներ են սվել ադրբեջանցիներին, և վերջիններս կարծում են, թե այս երկրում իրենք կարող են իրենց թույլ տալ ամեն ինչ: Փաստորեն Սաֆարովի արտահանվածումը հիմք հանդիսացավ այս երկու պետությունների միջև ավելի լավ բարեկամական կապեր ստեղծելու համար: – Այժմ, երբ նամակն ուղարկված է, ի՞նչ ակնկալիքներ ունեք: – Նման դեպքերում յուրաքանչյուր դեմոկրատական երկրում արդարադատության նախարարը պարտավոր է պատասխանել: Սակայն, քանի որ մենք արդեն մեկ տարի է հետևում ենք այս հարցի շուրջ իրականացվող գործողությունների ընթացքին, գիտենք, որ նա ոչինչ չի արել և, հետևաբար, պատասխանելու ոչինչ չունի: Իհարկե մենք մեր նամակն անգլերեն թարգմանությամբ հղելու ենք նաև Եվրամիության մարդու իրավունքների պաշտպանության կոմիտե, որտեղ Հունգարիայի ներկայացուցիչը հենց արդարադատության նախարարն է: Այնուամենայնիվ նա կանգնելու է այս հարցերին պատասխան տալու խնդրի առաջ լինի դա մեզ, թե կոմիտեյին: – Իսկ եթե այնուամենայնիվ չլինի որևէ պատասխան: – Տեսե՛ք, մենք իրենից չենք խնդրում, որ զբաղվի հայկական հարցերով, այլ պահանջում ենք իրեն ի պաշտոնե տրված պարտականությունների

իրականացում:
Այս պատասխանը ոչ միայն հայերի համար է կարևոր, այլև հունգար ժողովրդի: Պետք է տարբերել հունգար ժողովրդին կառավարությունից, քանի որ ժողովուրդը

մշտապես ցավել է այս խնդրի համար և նույնպես սպասում է արձագանքի:
Իսկ նրա չպատասխանելն, ինքնին կլինի պատասխան: Որևէ դրական ակնկալիք չունենք:
Արև Լալայան

Հունգարիայի հայ համայնքի բաց նամակը Հունգարիայի արդարադատության նախարարին

Մեծարգո՝ նախարար,
Դուք երկար տարիներ լուրջ աշխատանքներ էիք տանում, որպեսզի իռլանդացի ճանապարհային հանցագործը, ով մինչ այժմ հաջող կերպով կարողանում էր թաքնվել օրենքից, վերջապես ստանա իր՝ օրենքով նախատեսված պատիժը՝ բավարարվածություն և խաղաղություն պարզելով սզացող ընտանիքին և ողջ Հունգարիային: Ջանք ու եռանդ չխնայեցիք, ներդրեցիք բոլոր քաղաքական և դիվանագիտական լծակները նպատակին հասնելու համար: Դուք արեցիք դա, ոչ միայն Ձեզ ընտրողների սպասելիքներն արդարացնելու համար, այլ քանի որ այն նաև Ձեր անմիջական պարտքն էր և ներքին վերահսկողության ու խղճի խնդիր:

Մենք տարբերում ենք մեղքն ու հանցավորությունը: Մեր օրենքն ու արդարության զգացումը նույնպես: Հնարավոր չէ հավասարի նշան դնել չկանխամտածված սպանության և առանձնակի դաժանությամբ դիտավորյալ կատարված կոտորածի միջև: Իռլանդացի փախուստի դիմած վարորդը պատրաստվում է պատժվել, գնչու մարդասպանները նույնպես պատժված են, ինչպես բոլոր նրանք, ովքեր բերման են ենթարկվել ոստիկանության կողմից և ունեն դատարանի վճիռը:

Այդ իսկ պատճառով էլ այս բաց նամակը հղում ենք այժմ: Դարեր շարունակ Հունգարիայում բնակվող հայկական փոքրամասնությունը ակնկալում է Ձեր նույնքան հետևողական և բարեխիղճ վերաբերմունքն, ինչպես մյուս դեպքերում է. մինչև վերջ պաշտպան կանգնել զոհերի համար, հաստատել օրենքի ուժը, անհանդուրժողականություն մեծագույն մեղքի՝ սպանության նկատմամբ, ինչն այս դեպքում ավելի փառաբանված ահաբեկչություն էր: Հիշեք տիրահոջակ մարդասպան Սաֆարովին, նրա միտումնավոր, ստոր հիմքերով և կանխամտածված կատարած գործողությունը, ճիշտ ինչպես գնչուների հրաձգության ժամանակ: Եթե դա անպատիժ է թողվում, մենք դեռ մեկ զոհ չէ, որ կունենանք: Բուդապեշտում այդ փետրվարյան օրերից հետո վախի և

անհանգստության զգացում է պատել բոլոր հայերին: Սպանությունը, որպես այդպիսին, հայերի ցեղասպանության, Սուվգայիթյան և Բաքվի ջարդերի կրկնությունն ու շարունակությունն է: Մարդասպանին ազատություն շնորհելը մեզ ստիպում է սարսափել ոչ միայն ոճրագործից, այլև ողջ երկրից, որը տոնում է և ճանաչում նրան, որպես հերոս: Այդ ժամանակվանից ի վեր մենք փորձում ենք ճնշել այդ զգացողությունը մեր մեջ, անհանգիստ ենք մեր երեխաների և սիրելիների համար, քանի գիտենք, որ ահաբեկչությունն անկանխատեսելի է և դաժան:

2012թ. օգոստոս ամսին Աստծո հինգերորդ պատվիրանը՝ «Մի՛ սպանիր» արժեզրկվեց Բուդապեշտում՝ հանուն կառավարության «ազգային շահերի», որն արտոնություն տվեց Ադրբեյջանին:

Պարո՛ն նախարար, տեղի ունեցածից մեկ տարի անց ողջ հայ ազգի անունից խնդրում ենք Ձեզ պատասխանել հետևյալ հարցերին.

- Ի՞նչ է տեղի ունեցել վերջին տարում՝ հանցագործին վաղաժամկետ ազատելուց, արտահանվելուց և ձևական բողոք ներկայացնելուց հետո:
- Արդյո՞ք Հունգարիան դիմել է որևէ միջազգային համաժողովի, քանի որ չի կարողացել հասնել այն բանին, որ Ադրբեյջանը գործի ըստ օրենքի և պայմանագրի, և հանցագործը ենթարկվի պատասխանատվության Հունգարիայում կամ իր հայրենիքում:
- Ի՞նչ քայլեր է կառավարությունն արդեն ձեռնարկել և պատրաստվում ձեռնարկել, որպեսզի պարտադրի օրենքի ուժի կիրառումը: Այս հարցերն անպատասխան են մինչ օրս, քանի որ կառավարությունն այս գործը փակված է համարում: Լիահույս ենք, որ բողոքը ոչ թե ցուցադրական է ալիքի ապահովելու համար, այլ ողջախոհության և խղճի վրա հիմնված արձագանք, որից ելնելով այս խնդիրը փակված չի համարվում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

2012թ. դեկտեմբերին Հունգարիայի հայկական ինքնավարության հերթական ժողովի օրակարգում ընդգրկված էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչման խնդիրը: Ժողովի մասնակից 21 անդամները միաձայն քվեարկեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչման համար: ՀՀԻ նախագահ Սարգսյան Սևանն իր խոսքում նշեց, որ տվյալ որոշմամբ փորձում են խթանել և մղել Հունգարիայի կառավարությանը ևս նման քայլի, ինչպես նաև կոչ են անում հայ սփյուռքին նման հնարավորության առկայության դեպքում հետևել իրենց օրինակին՝ շեշտելով, որ սփյուռքահայության առաջնային պարտականությունն է բոլոր ջանքերն ուղղել ԼՂՀ խնդրի լուծմանը: Սկսելով ինքնավարություններից ու հաստատություններից պետք է հասնել պետական մակարդակի:

Ժողովի անդամները նաև նշեցին, որ հասկանում են և պարզ է, որ վերջին տարիներին Ադրբեջանի և Հունգարիայի հարաբերությունները զարգացան մի հողի վրա, որտեղ գրեթե անհնար է ակնկալել նման որոշում, սակայն դա չպետք է կանգնեցնի իրենց: Գուցե Հունգարիայի քաղաքապետարանները, որոնք ունեն նույն արտոնություններն, ինչ ինքնավարությունը, չկարողանան ընդունել ԼՂՀ անկախության ճանաչման որոշումը՝ որոշակի քաղաքական նկատառումներից ելնելով, սակայն իրենց նման հարցում որևէ սահմանափակում չի կարող լինել:

1993թ. Հունգարիայի կառավարությունն ընդունեց օրենք՝ ըստ որի Հունգարիայում բնակվող ազգային փոքրամասնություններից 13-ին տրվեց արտոնություն ընտրությունների միջոցով ստեղծել ինքնավարություն, որն ունի պետական հաստատության կարգավիճակ: 1994թ.-ին ստեղծվեց Հունգարիայի հայկական ինքնավարությունը: Տրված արտոնության համաձայն էլ հաստատության կայացրած որոշումներն ունեն պետական կարգավիճակ, իսկ արձանագրությունները ներկայացվում են Հունգարիայի կառավարությանը: որ ԼՂՀ անկախությունը հռչակվել է 1991 թվականի սեպտեմբերի 2-ին միջազգային իրավունքի հիմնարար նորմերին համապատասխան: Այդ օրվանից ի վեր հանրապետության իշխանությունները հետևողականորեն վարում են կովկասյան տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանմանն ուղղված քաղաքականություն:

Արցախը (Լեռնային Ղարաբաղ) Հայաստանի անբաժանելի մասն է: Ուրատական սեպագիր արձանագրություններում երկրամասը կոչվում են «Ուրտեխե» - «Ուրտեխինի»: Ըստ էության երկրամասը նույն անունով են կոչել նաև հին հույները: Հույն հեղինակ Ստրաբոնի «Աշխարհագրությունում» (մ.թ. I դար) Քուր գետի աջ ափին գտնվող երկրամասը հիշատակվում է «Օրխիստենա» (Orcisthnh) անունով՝ որպես Մեծ Հայքի մարզերից մեկը, հայտնի իր մեծաքանակ այրուձիով:

Միջնադարում Արցախը հայտի է եղել նաև «Ծավդեք» (Ծավդեքյան իշխանական տան անունով), «Փոքր Սյունիք», 13-րդ դարից «Խաչեն» անուններով: 18-րդ դարում գործածական էր «Փոքր Հայաստան» անվանումը: Մինևույն ժամանակ Ուտիք նահանգի հետ միասին Արցախը կոչվել է «Աղվանք», «արևելից կողմանք», «Խորին աշխարհն Հայոց»: 387 թ. Մեծ Հայքը բաժանվեց Հռոմեական կայսրության և Պարսից տերության միջև, արևելյան նահանգներ Արցախը և Ուտիքը միաժամանակ միացան Աղվանքին, մինչև վերջինս նույնպես գրավվեց Պարսկաստանի կողմից: Այնուհետև Լեռնային Ղարաբաղը գտնվում էր Բագրատունյաց թագավորության կազմում (12-13դդ.):

Դարեր ի վեր Ղարաբաղը հանդիսացել է տարբեր նվաճողների թիրախ, սակայն մնացել է հայերին և ստացել կիսաանկախ կարգավիճակ: 17-րդ դարի կեսերից Ղարաբաղի հյուսիսային հատված են սկսում ներխուժել թուրքական քոչվոր ցեղեր, ինչը բխումներ է առաջացնում տեղի հայերի հետ:

Շուրջ 1750 թ. Ղարաբաղում իշխանության գլուխ է գալիս Փանահ Ալի խանը, սա սկիզբն է դառնում Ղարաբաղի Խանության: Այս շրջանում հայերի հոծ արտահոսք է սկսվում Արցախից: Ցարական Ռուսաստանը, որն այդ միջոցին ավելի ու ավելի էր ընդարձակվում դեպի հարավ, 1805թ.-ին միակցում է Ղարաբաղը, որն հատագայում վավերացվում է Գյուլիստանի պայմանագրով 1813 թ. Ռուս-պարսկական պատերազմի (1804-1813թթ.) վերջում:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, որի 95%-ը հայեր էին, առաջին համաժողովը գումարեց, որը հռչակեց Լեռնային Ղարաբաղը անկախ քաղաքական միավոր, այնուհետև ընտրեց Ազգային Խորհուրդ և կառավարություն: Երբ 1918 թ. Հայաստանը և Ադրբեջանը որպես դեմոկրատա-

կան հանրապետություններ իրենց անկախ են հայտարարում, Ղարաբաղի տարածքը դառնում է վեճի առարկա երկու պետությունների միջև՝ ուղեկցվելով մի քանի կարճ ռազմական բախումներով:

1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում տեղի է ունենում Արցախահայության անդրանիկ համագումարը (ԱՀՀ), որը Լեռնային Ղարաբաղը հայտարարում է «անկախ վարչա-քաղաքական տարածք», ընտրում է Ազգային Խորհուրդ և հիմնում ժողովրդական կառավարություն: Երկու օր անց «Ղարաբաղի ժողովրդական կառավարության դեկլարացիայով» հրապարակվում են իշխանության առաջիկա կարևորագույն խնդիրները: Մինչև 1920 թ. Արցախին ուներ ինքնիշխան պետության բոլոր անհրաժեշտ ատրիբուտները, այդ թվում՝ օրինավոր իշխանություն և զինված ուժեր: Ազգերի Լիգայի կողմից Ղարաբաղը ճանաչվել է որպես վիճելի տարածք, այն չի ճանաչվել ոչ որպես Ադրբեջանի տարածք:

Լեռնային Ղարաբաղը ցանկանում էր խաղաղության հաստատել, սակայն ի պատասխան իր այդ նախաձեռնության՝ Ադրբեջանը սկսեց ռազմական հարձակում: 1918թ. մայիսից 1920թ. ապրիլը Ադրբեջանը թուրքական օժանդակ գործառնների օգնությամբ իրականացրեց հայ ժողովրդի կոտորած: 1920թ. Շուշի քաղաքում մոտ 40.000 հայ էր սպանվել և տեղահանվել: Բայց նույնիսկ այս ճանապարհով նրանք չկարողացան Լեռնային Ղարաբաղի ժողովրդին հնազանդեցնել և հաստատել Ադրբեջանի իշխանությունը: Խորհրդային Ռուսաստանը նույնպես հաստատել էր, որ Լեռնային Ղարաբաղը վիճելի տարածք է Հայաստանի և Ադրբեջանի միջև: Ըստ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի համաձայնագրի՝ 1920թ. ռուսական զորքերը ժամանակավորապես տեղակայվել էին Ղարաբաղի տարածաշրջանում:

1920թ. նոյեմբերի 30-ին խորհրդային համակարգի ստեղծմամբ Ադրբեջանի շեղափոխական կոմիտեն/հիմնական բոլշևիկյան իշխանական գործիք/ իր հայտատարությունում անմիջապես ճանաչեց Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանի անբաժանելի հատված:

Ըստ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ազգային Խորհրդի, Ադրբեջանի շեղումի

և Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարության համաձայնագրի՝ 1921թ. Լեռնային Ղարաբաղը հռչակվեց որպես Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անբաժանելի հատված: Հայաստանը նույնպես ճանաչեց Լեռնային Ղարաբաղը որպես իր անբաժանելի հատված: Հայաստանի կառավարության կողմից հրապարակված հրամանագիրը տպագրվել էր թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական մամուլում, ինչպես նաև 1921թ. Հունիսի 22-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության «Բաքու աշխատավոր» ամսագրում: Այս դեպքում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միավորումն ամրապնդված էր օրենքով: Միջազգային իրավունքի և նորմերի համատեքստում սա վերջին օրինական ակտն էր կապված Լեռնային Ղարաբաղի հետ խորհրդային կարգերի ժամանակ: 1921թ. Հուլիսի 4-ին Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան գրասենյակը հերթական նիստ գումարեց, որտեղ ամրապնդվեց, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մի մասն է: Այնուամենայնիվ, Հուլիսի 5-ի գիշերը, Մոսկվայի թելադրանքով և Ստալինի անմիջական միջամտությամբ, նախորդ օրվա որոշումը վերանայվում է և առանց որևէ ընթացակարգի ստիպողապար հաստատվում նորը. Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար տարածք կլինի Ադրբեջանի տարածքում: Այս որոշումն աննախադեպ ակտ է միջազգային իրավունքի պատմության մեջ, երբ երրորդ երկրի (Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցություն) կազմակերպությունը առանց որևէ օրինական հիմքի որոշում է Լեռնային

Ղարաբաղի կարգավիճակը:

Ողջ խորհրդային ժամանակաշրջանում, Լեռնային Ղարաբաղի հայերը երբեք չեն ընդունել այդ որոշումը, և տասնամյակներ շարունակ պայքարել են հայրենիքին վերամիավորելու համար: Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներկայիս փուլը սկսվել է 1988 թ-ին, երբ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման պահանջի՝ Ադրբեջանի իշխանությունները Ադրբեջանի ողջ տարածքում կազմակերպեցին ջարդեր և էթնիկ ոչնչացում ի դեմ հայ բնակչության,



հատկապես Սումգայիթում, Բաքվում և Կիրովաբադում:
 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հանրաքվեի ժամանակ համաձայնության է եկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հիմնադրելու մասին, ինչը լիովին համապատասխանում էր միջազգային իրավունքի նորմերին, և այդ ժամանակվա Խորհրդային Միության իրավական նորմերին և օրենքներին: Այսպիսով, նախկին Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում երկու հավասար պետություններ ստեղծվեցին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը: Լեռնային Ղարաբաղը և հարակից հայաբնակ տարածքներն Ադրբեջանի իշխանությունների թիրախն էին, ովքեր վարում էին բաց ագրեսիվ քաղաքականության և իրականացնում լայնածավալ ռազմական գործողությունների, ինչի արդյունքում հայերն ունեցան հազարավոր կորուստներ և կրեցին մեծ վնասներ: Ադրբեջանը երբևէ չի անհանգստացել միջազգային համայնքների կոչերից, հատկապես ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին բանաձևերի հետ կապված, որը կոչ էր անում դադարեցնելու ռազմական գործողությունները և անցնել խաղաղ բանակցությունների: Մայիսին, 1994 թ. Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը ստորագրեցին հրադադարի համաձայնագիր, որը, չնայած

բազում խախտումների, դեռևս ուժի մեջ է: Ադրբեջանի ագրեսիվ ռազմական արշավը նաև հարցեր է առաջացնում իր համահարթեցման կամքի, պարտավորությունների և բարեկամական հարաբերությունների հաստատման իր լրջության հետ կապված: Ադրբեջանը շարունակում է մեծացնել իր ռազմական բյուջեն, որը ֆինանսավորում է իր նավթային եկամուտներով, խախտում է բազմաթիվ պայմանագրեր ու պարտականություններ անվտանգության և ռազմաքաղաքական բնագավառներում: Ի դեպ, Ադրբեջանը ճնշում է բոլոր տնտեսական, քաղաքական, ռազմական և հումանիտար նախաձեռնությունները, որոնց նպատակն է ամրապնդել վստահությունը կողմերի միջև: Հայաստանը ձգտում է կարգավորել միայն խաղաղ ճանապարհով: Ադրբեջանի ուժ կիրառելու և սպառնալիքներով միակողմանի զիջման հասնելու փորձերն ի սկզբանե դատապարտված են եղել անհաջողության, և մինչ օրս հանդիսանում են փոխհամաձայնության գալու հիմնական խոչընդոտ: Լեռնային Ղարաբաղը, որպես Ադրբեջանի մաս, ապագա չունի, և ինչ լուծում էլ որ տրվի, պետք է լինի ըստ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքի: Սա մարդկանց ինքնորոշման խնդիրն է և Ադրբեջանը ոչ իրավական, ոչ էլ քաղաքական կամ բարոյական հիմք չունի պահանջելու Լեռնային Ղարաբաղը:

Ալեքս Ավանեսյան

«ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ

«Ի՞նչ է Հայաստանը քեզ համար. պարզապես մի վայր, ինչ- որ գաղափար, թե՛ պատմության մի հատված: Գուցե բացասական լուրերի հեղեղ»:
 «Վերադարձ Հայաստան» (Repatriation) հիմնադրամն առաջարկում է աշխարհասփյուռ հայ որդիների հայրենադարձություն իրենց կարողություններով ու հմտություններով հայրենիքը ծաղկեցնելու ազգօգուտ նախաձեռնությամբ:
 «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը տարբեր երկրներում շարունակում է իրականացնել ֆորումներ՝ նվիրված հայրենադարձությանը: Նրանցից մի մասն արդեն իսկ անցկացվել է Ման Ֆրանցիսկոյում, Լոս Անջելեսում, Լոնդոնում, Մոսկվայում, Բեյրութում, ինչպես նաև Բուդապեշտում: Սեպտեմբերի 27-ին Հայկական մշակութային

կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Վարդան Մարաշյանի հետ: Վ.Մարաշյանը մանրամասն ներկայացրեց հիմնադրամի գործունեությունը, խոսեց ձեռք բերած հաջողությունների, ունեցած արդյունքների և ապագայի հեռանկարների մասին: Մարաշյանն ընդգծեց, որ անխտիր հայկական բոլոր համայնքներից հայորդիներ վերադառնալու են հայրենիք և «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը պատրաստ է օգնել և նպաստել նրանց հաստատմանը Մայր Հայրենիքում:
 «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի գործունեությանը մանրամասն կարող եք ծանոթանալ հիմնադրամի պաշտոնական կայքում՝ www.repatriation.org

«ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ԼԵՌՆԵՐԸ» ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ

Արցախի գլխավոր խորհրդանիշներից մեկը հանդիսացող «Մենք ենք, մեր լեռները» նոր կապիտալ վերանորոգված հուշարձանի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել է Արցախի Նախագահ Բակո Սահակյանն:

Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության հաղորդմամբ, երկրի ղեկավարն ընդգծել է ազգային խորհրդանիշների պահպանման կարևորությունը՝ գոհունակություն հայտնելով, որ այս գործընթացի մասնակից է նաև սփյուռքը: Այս համատեքստում Նախագահ Սահակյանը երախտագիտություն է հայտնել բարերար Կարեն Ավագյումյանին համալիրի բարեկարգման աշխատանքները ֆինանսավորելու համար՝ այն համարելով պատմական հայրենիքի հետ կապերն ամուր պահելու լավագույն միջոցներից մեկը: Միջոցառմանը մասնակցում էին ԼՂՀ երկրորդ նախագահ Արկաղի Դուկայանը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրիսյանը, Հայաստանի առաջին տիկին Ռիտա Սարգսյանը, ԼՂՀ ԱԺ խոսնակ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ բարոնուհի Քերոլայն Քոքսը, կոթողի հեղինակ Սարգիս Բաղդասարյանի որդի Աշոտ Բաղդասարյանը, Արցախի և Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներ, բազմաթիվ հյուրեր արտերկրից: Ելույթի համար խոսք տրվեց նաև քանդակագործ Աշոտ Բաղդասարյանին: Նա հուզված էր և երախտապարտ ԼՂՀ իշխանություններին՝ հորը արժանվույնս գնահատելու համար:



Բարերար Կարեն Ավագյումյան

Ելույթ ունեցավ նաև բարերար Կարեն Ավագյումյանը, ով կարևորեց ԼՂՀ իշխանությունների, մասնավորապես, Բակո Սահակյանի կողմից ցուցաբերվող վերաբերմունքը կապված սփյուռքահայ գործարարների նախաձեռնությունների հետ, այն է՝ հովանավորչությամբ նպաստել պատմական հայրենիքի վերականգնմանը, աջակցել համերկրացիներին՝ ապրելու բարեկեցիկ պայմաններում:

Շնորհակալություն հայտնվեց հուշարձանի տարածքի բարեկարգման նախագծի ճարտարապետ, «Նարինե և Գեղանի» ՍՊԸ տնօրեն Վլադիկ Սարգսյանին, ինչպես նաև շինարարական աշխատանքներն իրագործած «Արկշին» ՍՊԸ կապալառու կազմակերպության տնօրեն Արկաղի Ծատրյանին՝ աշխատանքները բարձր մակարդակով կատարելու համար: Կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի հեղինակի որդուն՝ Աշոտ Բաղդասարյանին և բարերար Կարեն Ավագյումյանին:

Տեքստի համադրումը և լուսանկարները՝ Արմեն Ենգոյանի

Հունգարիայում ծագումով անվանի հայերը

ԱՐՎԵՍՏԱԳԵՏ ԱԳԱՐԴԻ ԳԱԲՈՐԸ

Ծագումով հայ Հունգարիայի ժողովրդական արտիստ Ագարդի Գաբորի հետ այս հարցազրույցը տեղի է ունեցել 2002թ-ին նրա 80-ամյակի առթիվ: Ինչպես նշել է Ագարդի Գաբորը, մի քանի տարի առաջ դժվար կպատկերացներ, որ կարողանար հարցազրույց տալ առողջական ծանր վիճակի պատճառով, սակայն այժմ, ի շնորհիվ բժշկական միջամտության, ավելի կայուն է:


Չեմ կարող պատկերացնել ինձ թոշակառու. նստել աթոռին և նայել երկնքին: Դա իմաստ չունի: Մարդն ապրում է այնքան, որքան նպատակներ և անելիքներ ունի: Ով այդպես է ապրում՝ ամենադժբախտ մարդն է, իսկ ես այդ մարդը չեմ, քանի որ շատ երջանիկ եմ. ունեմ 80 տարվա կյանք, որից 65-ը նվիրել եմ արվեստին և ապրում եմ նրանով: 16 տարեկանից եղել եմ շատ ինքնուրույն: Հայրս հայ էր, կրում էր Արկայան ազգանուն: Հետո եկավ մի ժամանակ, երբ հունգարաբնակների ազգանունները պետք է լինեն հունգարական: Մայրս, ում ազգանունը Արկայան Միկլոշնե էր ասաց, որ ինքն այլևս չի ուզում փոխել, քանի որ արդեն տարիքով էր, երիտասարդը մենք ենք և ապագան մերն է. թե օրենքն այդպես է պահանջում, պետք է փոխել: 1933թ. մենք դարձանք Ագարդի:

-Ինչպե՞ս հայտնվեցիք Հունգարիայում: Ինչպե՞ս ծնողներդ ծանոթացան: -1915թ. Հայոց Ցեղասպանության ժամանակ հայրս կարողացել է փախչել ջարդերից և հասել Տրանսիլվանիայի Սեկեյուդվարիեյ քաղաք: Հայրս այն ժամանակ երիտասարդ էր և աշխատում էր որպես դերձակ: Շրջագայել է Եվրոպայի տարբեր քաղաքներում մասնագիտության մեջ ավելի հմտանալու համար: Ճամփորդել է շատ, վարպետացել մասնագիտության մեջ և, վերադառնալով Հունգարիա, Հոդմեզովաշարիեյում հանդիպել է մորս: Ամուսնանալուց հետո

տեղափոխվել են Սեգեդ քաղաք: -Ինչպիսի՞ հոգեբանությամբ են Ձեզ դաստիարակել օտար երկրում: -Հայրս ինձ հետ մշտապես խոսում էր հունգարերեն, քանի որ զգում էր, որ ես դժվարանում եմ հայերեն բառեր հիշել: Որոշ ժամանակ անց ինքն էլ էր շատ բառեր մոռացել, քանի որ տարածաշրջանում չկար մեկն, ում հետ կարելի էր խոսել հայերենով: Ես երբեք չեմ ամաչել, որ ազգությամբ հայ եմ, միշտ հպարտացել եմ դրանով՝ անկախ նրանից, որ կիսով չափ հունգարացի եմ: Մայրս Հոդմեզովաշարիեյում աղքատ ընտանիքից մի աղջիկ էր, ով սիրահարվել էր 2 մետր բոյ ունեցող, կապտասևավուն մազերով, հնդկացու նման մի տղամարդու: Երբ հիշում եմ հորս և մորս, կարծես ժամացույցի 2 սլաքներ լինեին. հայրս մեծ սլաքն էր, մայրս՝ փոքր: Հայրս անսահման հումոր ուներ: Երբ ասում են, որ կա մարդ, ով ամեն ինչից հասկանում է, հայրս է: Կարծում եմ շատ հատկանիշներ իրենից եմ ժառանգել, ինչպես օրինակ՝ սրբապատկերներ նկարելու ունակությունս: Ինչպես նաև շատերն ասում են, որ հումորս հորս հումորի նման է: 9 տարեկան էի, երբ հայրս մահացավ: Նրա հետ անցկացրածս յուրաքանչյուր վայրկյանը վառ է իմ մտքում. հումորը, ժպիտը և խրատները: Միշտ իրենից 5 մետր առաջ էի քայլում, որպեսզի տեսնի ինձ, և եթե հանկարծ հոգնած

կամ տգեղ էի քայլում, մեջքիս հետևից ուղիղ, գեղեցիկ քայլելու հրաման էր գալիս: Միշտ շատ էլեգանտ էի հագնվում. փայլուն կոշիկներ, սպիտակ գուլպաներ, կարճ տաբատ և փոքրիկ նավաստիական հագուստ: Ամեն կիրակի օր պարտադիր գնում էինք եկեղեցի, և պատարագից հետո հայրս ու ընկերները հավաքվում էին Սեգեդի Սեչենյի հրապարակի զարեջրատանը: Նրանք ուտում էին նրբերշիկ և զարեջուր խմում, իսկ ես՝ ազնվամորու հյուր:

-Ասացիք, որ ամեն կիրակի գնում էիք եկեղեցի. ապրու մ եք



քրիստոնեական կյանքով և հավատքով:

-Հայրս ապրում եր:

-Հայ առաքելական, թե՛ կաթոլիկ:

-Հունական ուղղափառ: Իմ կնուները շատ խառնաշփոթ եր: Մայրս տարել էր կաթոլիկ եկեղեցում կնքելու, և երբ հայրս իմացավ, տարավ ինձ հունական ուղղափառ եկեղեցի, որտեղ ինձ նորից կնքեցին: Մայրս սա իմանալով, ասաց, որ այդ դեպքում ոչ մեկն էլ թող չլինի. փաստորեն դարձա հույն կաթոլիկ:

-Իսկ անձնական կյանքն ինչպե՞ս դասավորվեց:

-1956թ. ամուսնացա: Կինս շատ գեղեցիկ էր, բալետի հրաշալի պարուհի, լավ ընկեր և կողակից: Այդ շրջանում Հունգարիայում բարդ դրություն էր, կարելի էր ասել գնդակների և հեղափոխության ձայնի ներքո ենք ամուսնացել: Ծնողներից ո՞վ է Ձեզ համար հանդիսացել օրինակ և ներշնչել:

-Հայրս շատ վաղ մահացավ, ես նրան անչափ շատ էի սիրում: Ճիշտն ասած, շատ եմ տանջվել իր խիստ դաստիարակությունից, ինչպես ասացի արդեն, հայրս շատ խիստ էր, միևնույն ժամանակ մեծ հումորով: Այժմ իմ ողջ կյանքի համար ես երախտապարտ եմ նրան, որ ինձ տարիների ընթացքում ինձ դաստիարակեց որպես այսպիսի մարդ:

Մայրս հիասքանչ կին էր, բայց ցավոք նա էլ երիտասարդ տարիքում մահացավ, սակայն այդ ժամանակ արդեն դերասան էի: Արդեն սովորել էի ճիշտ խոսել, պահել, կանաց հարգել, ունեի էլեգանտ կեցվածք, ինչը բնականաբար ծնողների դաստիարակությունից էր գալիս:

-Իսկ ի՞նչ թուլություններ ունեք

-Կարելի է ասել չունեմ: Քիչ եմ ուտում. միայն այնքան, ինչքան անհրաժեշտ է ապրելու համար: /կատակում է/ Կար մի ժամանակ, որ շատ խմում էի, ճիշտ է առանձնապես չէր ազդում, սակայն հիմա դա էլ չեմ անում:

-Հավանաբար զինի էիք սիրում խմել...

-Ո՛չ զինի եմ խմել, ո՛չ գարեջուր: Ինչպես իմ լավ ընկերն էր ասում, իսկական խմիչքը պալինկան է, քանի որ ավելի հյութեղ է և նպատակին շուտ է հասցնում:

-Իսկ ինչպե՞ս և որտե՞ղ սկսվեց Ձեր դերասանական գործունեությունը

- Սկզբում խաղում էի Հունգարիայի ազգային թատրոնում, սակայն իմ դերասանական կարիերայի ծաղկուն շրջանը սկսվել է Պետոֆի թատրոնում: Երբ ազգային թատրոնի շենքը վերածվեց ավերակի, այն միացավ Պետոֆի թատրոնին, և ես մշտապես կատակում էի, թե ես չեմ գնացել ազգային թատրոն, այլ թատրոնն է եկել ինձ մոտ: Պետոֆի թատրոնում ես ունեի իմ առանձին

Ազարդի Գաբորը (1922թ., Գաբրիել Արկալիյան) հունգարահայերի մեջ ամենաճանաչված արվեստագետն է եղել և վայելել է ոչ միայն հայերի սերն, այլև ողջ հունգար ժողովրդի: Մշտապես կապ է պահպանել Հունգարիայի հայերի և համայնքի հետ: Իր ողջ ստեղծագործական ընթացքում խաղացել է բազմաթիվ դերեր թե՛ թատրոնում, թե՛ ֆիլմերում: Թատրոնում խաղացել է շուրջ 25 գլխավոր դեր, ինչպես նաև շուրջ 30 խաղարկային և 40 արկածային ժանրի ֆիլմերում: Ամենահայտնի ֆիլմերից են օրինակ՝ «Լուդաշ Մատյի» (1976թ.), «Հրամանատարը և մյուսները» (1965թ.), «Մի սիրո երեք գիշերները» (1967թ.), «Էգրի՛, աստղերը» (1968թ.) և իր վերջին ֆիլմը՝ «Մումերն ամբողջությամբ են հալչում» (2006թ.): Այս ֆիլմերը կարևոր դեր են զբաղեցնում հունգարական կինեմատոգրաֆիայի պատմության մեջ:

Նա մինչև կյանքի մայրամուտը նվիրված է եղել արվեստին և չի հեռացել բեմից: Ազարդի Գաբորը մահացել է 2006թ. 84 տարեկան հասակում:

հանդերձարանը, դիմահարդարը, ճանաչված էի և շատ երջանիկ:

Սյնուհետև հրավեր ստացա Բելգիայում «Մուրացկաններ» օպերայում հանդես գալու և այնքան էի ոգևորվել այդ մտքով, որ արագ սկսեցի գերմաներեն սովորել: Սակայն այդ ժամանակ կոմունիստական շարժում էր գլուխ բարձրացրել Հունգարիայում և ինձ ասացին, որ նույնիսկ չեք գնում երկիրը լքելու մասին:

-Կարծում էին, որ չե՞ք վերադառնա

-Ինչպե՞ս չէի վերադառնա, եթե իմ ողջ կյանքը թատրոնում էր: Ես աշխատում էի առանց արձակուրդների և եթե անգամ գնում էի, 5 -րդ օրը կնոջս ասում էի, որ վերադառնում եմք, քանի որ չէի կարողանում երկար ժամանակ բացակայել:

-Այդքա՛ն շատ եք սիրում այս երկիրը:

-Երկիրը շատ եմ սիրում, բայց այն ինչ տեղի է ունենում այստեղ ինձ համար անընդունելի է: Չեմ սիրում, որ բոլորն ասում են, թե իրենք հունգարացի են և պետք է միաբանվեն, սակայն իրականում նույնիսկ գործի ժամանակ շատ տարանջատ են: Ես ունեմ ընկերներ, որոնց հետ շատ հարցերում եմք տարակարծիք, սակայն երբ հարցը վերաբերում է հայրենիքին, մենք մի ուժ ենք և գործում ենք միասին: Շատ կցանկանայի, որ այս երկրում ապրող բոլոր մարդիկ այս կերպ մտածեին:

Ավանեսյան Ալեքս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 22-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԸ



«Համաձայն էք, որ
Հայաստանի

Հանրապետությունը լինի անկախ
ժողովրդական պետություն ԽՍՀՄ կազմից
դուրս».

1991 թվականի սեպտեմբերի 21-ին այս հարցով
հանրաքվեին «Այո» է ասել ընտրողների 90
տոկոսից ավելին: Համաժողովրդական
քվեարկության արդյունքների հիման վրա էլ մեր
երկիրը հռչակվեց անկախ հանրապետություն:
1991 թ. մարտի 1-ին Գերագույն խորհուրդն
ընդունեց «1991թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ
տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու
մասին» որոշումը:

2013թ. Սեպտեմբերի 21-ին Հայաստանի
Հանրապետությունը և աշխարհի չորս ծագերում
տարածված աշխարհասփյուռ հայերը, նույն
ոգևորությամբ և հպարտությամբ տոնեցին
Հայաստանի Հանրապետության 22-րդ
տարեդարձը: Հունգարիայի հայերը
յուրաքանչյուր տարի միանում են այս տոնին՝
տարբեր քաղաքներում կազմակերպելով
միջոցառումներ՝ նվիրված Հայաստանին և նրա
մշակույթին: Այս տարի տոնական
միջոցառումներ տեղի ունեցան Բուդապեշտ,
Վեսպրեմ և Պապա քաղաքներում:
Վեսպրեմ քաղաքում ՀՀԻ կազմակերպած
միջոցառմանը միացան նաև ուկրաինական և



լեհական համայնքները՝ ի նշան հարգանքի և
բարեկամության: Միջոցառման ընթացքում
ներկայացվեց հայկական մշակույթը, հնչում էր
հայկական երաժշտություն, ինչպես նաև բոլորը
վայելում էին հայկական խոհանոցի համեղ
ուտեստները:

Պապա քաղաքի ինքնավարությունը նույնպես
քաղաքի բնակիչներին ներկայացրեց հայկական
մշակույթն իր ողջ գույներով: Այս տարի նաև
անակնկալ մատուցեց մեզ բոլորիս. առաջին
անգամ հանդես եկավ հայկական
թատերախումբ, որը ներկայացրեց հունգարերեն
լեզվով թարգմանված Հակոբ Պարոնյանի

ստեղծագործություններից:
Հունգարիայի մայրաքաղաք
Բուդապեշտի Հայկական
մշակույթային կենտրոնում
Հայաստանի Հանրապետության
անկախության 22-րդ տարեդարձին
նվիրված տոնակատարությունը
տեղի ունեցավ սեպտեմբերի 20-ին:
Ողջույնի խոսքով հաղես եկավ ՀՀԻ
նախագահ դր. Սևան Մարգարյանը
նշելով, որ 1991 թ. Հայաստանի
Հանրապետությունը հռչակվեց
անկախ հանրապետություն և իր
անկախության առաջին իսկ
տարիներին կանգնած էր լուրջ
խնդիրների առաջ. պատերազմ,
չրջափակում, երկրաշարժի
հետևանքները, փախստականների
մեծ հոսք, հազարավոր անօթևան



մարդիկ, էլեկտրաէներգիտիկայի բացակայություն: Հայաստանի ժողովրդի համար պատմական ծանր օրեր և տարիներ էին: Հասարակությունը գրկված էր նվազագույն կենցաղային պայմաններից:

Հայաստանը, Խորհրդային Միության այն փոքրաթիվ հանրապետություններից էր, որը պայքարել է իր անկախության համար և զոհեր տվել: Հայաստանի ժողովուրդը քաջ գիտակցում է, այն ազգը, որ անկախություն չունի, գոյություն չունի աշխարհի քարտեզի վրա: Այսօր, բոլորս քաջ գիտակցում ենք, որ 22 տարիների անկախ Հայաստանի Հանրապետությունն ապրում է պատմական ժամանակաշրջանում: Արդի աշխարհը նորանոր մարտահրավերներ է առաջադրում Հայաստանին, որոնք կարող ենք հաղթահարել միայն հայրենիքի և սփյուռքի միասնականությամբ, որի ծնունդն է անկախությունը:



Հայաստանի անկախության տոնը շարունակվեց տոնական բարձր տրամաբանությամբ և երաժշտությամբ Horváth Jazz trio-ի նվագակցությամբ: Անկախության տոնը շնորհավո՛ր, իմ դարավո՛ր Հայրենիք, քո սերունդները դեռ շատ հազարամյակներ են տոնելու այս օրը:


Ս. Սուսանյան

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ. ԼԱԶԱՐ ԻՄՈՒԼԱ

Այս տարի ևս մեկ անգամ հնարավորություն կլինի տեսնել ազգությամբ հայ նկարիչ Լազար Իմոլայի աշխատանքները: Հոկտեմբերի 8-ին Վեսպրեմ քաղաքի մշակութային կենտրոնում տեղի կունենա ցուցահանդեսի բացումը, որը կտևի մինչև Հոկտեմբերի 21-ը:

Լազար Իմոլան ծնվել է 1971թ. Հոկտեմբերի 20-ին Տրանսիլվանիայի Ռեյգեն քաղաքում, 1990թ. ավարտել է Բենեդեկ Էլեկի անվան դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել է Բուդապեշտում և 1999թ. ավարտել կահույքի և տեքստիլի ֆակուլտետը: 2001թ.-ին ավարտում է մանրանկարն էմալի վրա տեխնիկայի ուսուցումը և սկսում աշխատել: Մասնակցել է բազմաթիվ խմբային ցուցահանդեսների, ինչպես նաև ունեցել անհատական ցուցահանդեսներ: Ոչ միայն Հունգարիայում, այլև Ռումինիայի և Ֆրանսիայի որոշ քաղաքներում

այցելուները կարող են տեսնել նրա աշխատանքները: 2000թ-ից ի վեր ունեցել է ամենամյա անհատական ցուցահանդեսներ: Տարբեր քաղաքներում նրա աշխատանքները ցուցադրվել են շուրջ 32 անգամ: 2000թ-ին Հունգարիայի հայկական ինքնավարությունը դիմել է նրան պատրաստելու Աստվածաշնչյան թեմայով աշխատանքներ /էմալ և ակվարել/, իսկ 2002թ.-ին հայկական տառերի: 2002թ.-ին նրա աշխատանքները շահել են Միլենիում մրցանակը: Այժմ էլ Լազար Իմոլայի աշխատանքները գտնվում են



տարբեր երկրների թանգարաններում, ցուցասրահներում, ինչպես նաև անհատական հավաքածուներում: Նա իր աշխատանքներից մեկը Վիեննայի արքեպիսկոպոսի պալատում նվիրել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդին, և այժմ աշխատանքը գտնվում է Հայաստանի կրոնական կենտրոնի Էջմիածնի թանգարանում:

Դոմբի Գաբրիելյա


«ԱՐԱՐԱՏԻՑ ՀԵՌՈՒ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԿԱՐՊԱՏՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ» ԳԻՐՔԸ

«Արդյոք մի բան հասկանո՞ւմ եք Հայից... Որքա՛ն տարօրինակ, հանելուկային արարած: Որքա՛ն խաբուսիկ: Երևույթը, ո՞չ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Չո՞ւտ աշխատանք. որոնում ես իր ինքնությունը, գտնում, բայց և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ էր: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում՝ նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թվով, գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով ամենից անփոփոխը: Ամենից աննպաստը իր երկրի դիրքն է, ինքը ամենից համառ կառչեց նրան: Որքա՛ն անհույս է թվում իր ապագան, բայց և որքա՛ն հուսացող է նա: Ասենք՝ իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափագանցն է. զարմանա լի հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է: Ահա՛ նայիր այս բեռնակրին. ի՞նչ է սա. իսկական գրաստ, մեջքին մի սար բեռ՝ ճկվում է, մեջքը կոտրում: Աշխատանք է կատարում, թե ինքնախորտակում: Վրե՛ժ ունի, ի՞նչ է, իրենից հանելու: Ո՞ւմ դեմ է չարացել, որ իրեն է պատժում: Որքա՛ն ուժ, որքա՛ն աշխատասիրություն: Ապա՛ տար տունդ ծառա: Ի՞նչ է միտքը, մի փոքրիկ գումար շինե, գնա, դուրան բաց անե: Մարդը իր հացի և իր գործի տերն է ուզում լինել և ոչ թե սրանրա ծառան: Եվ արդեն Հայ նշանակում է տեր...»

հասված Դ. Դեմիրճյանի «Հայր» հոդվածից

Արարատ. հայկական ինքնության անբաժանելի սիմվոլ: Գաղափար, որն իր շուրջն է միավորում աշխարհասփյուռ հայերին: Այս տարվա ապրիլ-սեպտեմբեր ամսին երին հայկական մշակույթը ներկայացնող ցուցահանդեսը՝ նվիրված հայ գրքի տպագրության 500 տարելիցին, գրանցվեց պատմության էջերում: Ցուցահանդեսի յուրաքանչյուր սրահ զարդարված էր մեսրոպյան որևէ խոհրդանշական տառով և բնույթով բազմաբովանդակ էր: Հայագիտական այս խոշոր միջոցառումը հնարավոր դարձավ ավելի քան 4 տարվա նախապատրաստական աշխատանքների և արխիվային հետազոտությունների արդյունքում, ինչն էլ կյանքի կոչեցին պատմական գիտությունների թեկնածու պարոն **Բալինտ Կովաչը** (Լայպցիգի և Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարան), ինչպես նաև արվեստի

պատմության մասնագետ **Էմելա Փալը**: Ցուցահանդեսի ավարտին ներկայացվեց հունգարերեն և անգլերեն լեզուներով տպագրված գիրք-կատալոգը: Այս մեծ աշխատանքն ունի կարևորագույն գիտական նշանակություն ինչպես հայագիտությանը զբաղվողների համար, այնպես էլ



ի նպաստ հենց հայկական մշակույթի «լուռ» և դեռևս հանրությանը անհայտ առանձնահատկությունների վերհանման: Ցուցահանդեսի բոլոր ցուցանմուշները ներկայացված են կատալոգում՝ նկարների և մանրամասն նկարագրությունների

տեսքով, ինչն էլ կարող է լուրջ հիմք ծառայել հետագա հետազոտությունների համար: Գիրք-կատալոգի արժեքն ավելի է կարևորվում այն առումով, որ այնտեղ ներայացված են նյութեր և ցուցանմուշների վերաբերյալ նկարագրություններ, որոնք ցավոք այսօր գտնվում են այնպիսի արխիվներում, անձնական կամ եկեղեցական հավաքածուներում, որոնք փակ են անգամ գիտական հետազոտությունների համար: Գրքում առկա են նաև ինչպես հայնտի հայագետների և փորձագետների, այնպես էլ խոստումնալից ապագայով երիտասարդ գիտնականների հոդվածներ, որոնք այնպիսի լուրջ հայագիտական թեմաների շուրջ են, ինչպիսիք են Տրանսիլվանիայի հայերի պատմության, կյանքի, վերաբնակեցման, եկեղեցու, հայ տպագրության, արվեստի, Կարպատյան ավազանում հայ գրքի և գիտական նվաճումների, քաղաքականության և Մեծ Եղեռնի ազդեցության մասին: Գիրք-կատալոգն իր բնույթով լուրջ գիտական ներդրում է ոչ միայն Կարպատյան ավազանում հայկական մշակույթի պահպանման համար, այլև հայագիտական և սփյուռքագիտական հարցերի տեսանկյունից այն կարելի է դիտարկել որպես ուղենիշ:

Հակոբ Ա. Մաթևոսյան
Երևանի պետական համալսարանի և
Լայպցիգի համալսարանի ասպիրանտ

ԽԱՉՎԵՐԱՅ ՏՈՆԸ

Հայոց եկեղեցին սեպտեմբերի 15-ին նշեց Խաչվերաց տոնը:

Խաչվերացը, ինչպես ներկայացնում է Արարատ թեմի կայքէջը, Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարևորն է, որովհետև նվիրված է գերությունից խաչի վերադարձի և փառաբանության հիշատակին:

Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի և Գողգոթայում կանգնեցման, վերացման: Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց:

614թ. Պարսկաստանի Խոսրով թագավորը հարձակվում է Երուսաղեմի վրա, ավերում այն, սրի քաշում ժողովրդին, մեծ թվով գերիներ տանում: Որպես անարգանք քրիստոնյաններին՝ Սուրբ Հարության տաճարից գերևարվում և Պարսկաստան է տարվում նաև Տիրոջ խաչափայտը: Պարսկաստանում խաչափայտի գործոյամբ շատերը դարձի են գալիս, մկրտվում և դառնում քրիստոնյա: Խաչափայտը գերության մեջ է մնում 14 տարի: 628 թ. Բյուզանդիայի Հերակլ կայսրը քրիստոնեական մի հսկա բանակով հարձակվում է պարսիկների վրա, ազատագրում Ս.Խաչը և այն վերադարձնում նախկին վայրը: Որպես պատմական վկայություն՝ նշենք, որ հայ ժողովուրդն անմասն չէ խաչի ազատագրման գործից: Կայսրին ռազմական օժանդակություն է ցույց տրվել նաև հունական մասի հայոց զորքը՝ Մծեծ Գնունու գլխավորությամբ:

Խաչը հանդիսավոր թափոռով տարվում է Երուսաղեմ՝ Փոքր Ասիայի վրայով, ու բնական էր, որ այն անցնելու էր պատմական Հայաստանով: Թափոռն անցնում է Կարին (Էրզրում) քաղաքով, իսկ Կարնո լեռների ստորոտներից մեկում, ուր խաչի դրված տեղից վճիտ աղբյուր է բխում, կառուցվում է Խաչավանքի եկեղեցին: Կայսրը խաչափայտը սրբությանը երեք տարի Կ. Պոլսում պահելուց հետո անձամբ, կառքի մեջ ծնկած, այն ձեռքերում բռնած, Երուսաղեմ է տանում և իր ուսի վրա դրած Գողգոթայի գագաթը հանելով՝ բարձրացնում է Սուրբ Հարության վերանորոգված տաճարում՝ ի տես բոլոր քրիստոնյաների: Այդ ժամանակից էլ վերջնականորեն հաստատվեց և սկսվեց մեծ հանդիսավարությամբ տոնվել խաչի բարձրացման հիշատակը՝ Խաչվերացը:



Խաչը, ինչպես հայտնի է, հնում եղել է չարչարանքի գործիք: Երբ Հիսուս խաչվեց՝ այդ նույն խաչափայտը դադարեց չարչարանքի գործիք լինելուց: Խաչը դարձավ փրկության միջոց, Քրիստոսի սիրո արտահայտությունը, քանզի սիրել՝ նշանակում է նաև զոհաբերություն, զրկանք հանձն առնել: Սերը միայն զգացում չէ, սերը կյանք է և գործ: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ խաչը դարձավ երկինքի և երկրի միջև եղած վիհը միացնող կամուրջ, «դրախտի դռները բացողն ու երկնային արքայությունը որպես ժառանգություն տվողը»: Ժողովուրդը Խաչվերացին կատարում է անթիվ ուխտագնացություններ: Որոշ բնակավայրերում մարդիկ իրենց ձեռքերով խաչեր են պատրաստում և զարդարում գույնզգույն ծաղիկներով, հատկապես ռեհանով: Ժողովուրդը ռեհանն է համարում խաչի ծաղիկ: Այս տարի պատմական արևմտյան Հայաստանում, Վանի Աղթամար Ս.Խաչ եկեղեցին, Հայոց ցեղասպանությունից ի վեր արդեն չորրորդ անգամ վերակենդանացավ: Տարվա մեջ գոնե մեկ անգամ թանգարանից սրբավայրի վերածվող Սուրբ Խաչ եկեղեցու կամարների ներքո կրկին հնչեց հայ աղոթքն ու շարականը: Այս տարվա պատարագը խորհրդանշական էր. մեկ դարյա դադարից հետո առաջին անգամ եկեղեցում մկրտություն տեղի ունեցավ: Պոլսո հայոց պատրիարքարանի հոգևրականների ձեռամբ մկրտվեց 2 ընտանիք:

Համադրեց՝ Ս.Սուսանյան

ԱՂՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՍՏԵՐԻԱՆ

Հուլիսի 4-ից 8-ը Հունգարիայի Բալատոնֆյուրեդ քաղաքում կազմակերպվել էր մանկական մշակութային միջազգային փառատոն, որին մասնակցում էին տարբեր երկրներից ժամանած ներկայացուցիչներ, ինչպես նաև Հունգարիայում բնակվող ազգային փոքրամասնություններ:

Փառատոնն իր բնույթով մշակութային է, որի նպատակն է միավորել ազգերին: Բացի պարային և երաժշտական համարներից, փառատոնի շրջանակներում տրամադրվել էին նաև տաղավարներ, որտեղ ազգային տարրերի ցուցահանդես էին կազմակերպել ուկրաինացիները, յակուտները, հայերը և բուլղարացիները:

Հայկական համայնքը ցուցադրել էր պատմական Հայաստանի 13 մայրաքաղաքները և հին հայկական տառատեսակները, ներկայացրել «Արմենիա» և «Դիասպորա 21» ամսագրերը՝ հանդես գալով Հայաստանի և Արցախի դրոշների ներքո: Միայն թե չնայած այն բանին, որ միջոցառումը մշակութային էր, դա չխանգարեց Ադրբեջանի ներկայացուցիչներին քաղաքականացնել և աղմուկ բարձրացնել Արցախի դրոշի հետ կապված: Միջոցառման կազմակերպիչներն ստիպված էին միջամտել և հայերը, չքանկանալով փչացնել մանուկների տոնը, Արցախի դրոշը տաղավարի ներսում դրեցին: Հայկական համայնքի ներկայացուցիչներն իրենց, ամեն դեպքում, աղեկվատ



դրսեվորեցին՝ հաշվի չառնելով նույնիսկ, որ Ադրբեջանի մասնակիցները պարեցին հայկական երաժշտության ներքո՝ ներկայացնելով այն որպես ադրբեջանական: Հայկական մշակութային հիմնադրամի նախագահ Նիկողոս Հակոբյանն այս առիթով նշեց, որ լավ կլինի Հունգարիա ժամանող ադրբեջանցի զբոսաշրջիկներին իրազեկեն, որ Հունգարիայում բնակվող հայերն իրավունք ունեն Արցախի դրոշը բարձրացնել իրենց բոլոր մշակութային միջոցառումների ժամանակ, քանզի ներկայացնում են Հայաստանի պատմությունը, ինչը նաև չի արգելվում օրենսդրորեն, քանի որ Հունգարիայի հայկական ինքնավարությունն օրենքով նախատեսված կարգով անկախ է ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այս ժողովուրդը պետք է համակերպվի այս գաղափարի հետ, ինչպես նաև հասկանա, որ աշխարհը դիկտատորական Ադրբեջանով չի սահմանափակվում: Գուցե ադրբեջանցու համար անսովոր է նման դեմոկրատիան մարսել: Մեզ համար նույնիսկ զարմանալի չէ, որ իրենք ներկայանում են հայկական երաժշտության ներքո: Ի՞նչ կարելի է սպասել նման ժողովրդից. չէ՞ որ Ադրբեջանն անգամ 100 տարվա պատմություն և մշակույթ չունի և ստեղծման օրվանից միայն յուրացնում է:

Արև Լալայան



*Դարեր շարունակ բազմաթիվ ականավոր հայեր իրենց հետքն են թողել Հունգարիայի պատմության մեջ: Նրանցից շատերի մասին այսօր չի խոսվում, սակայն քայլերով Բուդապեշտում մենք կարող ենք զգալ իրենց ներկայությունը բազմաթիվ փողոցներում, որոնք կրում են այդ մարդկանց անունները:
«ԱՐՄԵՆԻԱ» ամսագրի խմբագրությունն այսուհետ յուրաքանչյուր համարում ձեզ կներկայացնի նոր էջ՝ նվիրված այն անվանի հայերին, ում անունով գոյություն ունեն փողոցներ Հունգարիայի տարբեր քաղաքներում:*

ՑԵՑ ՅԱՆՈՇ

Ցեց Յանոշի (Հովհաննես Ցեցյան, 1822-1904թթ.) փողոցը գտնվում է Բուդապեշտի 3-րդ թաղամասում: Այն միացնում է Մաթիաս թագավորի փողոցը Աթիլլա փողոցին: Փողոցի սկզբնահատվածում տեղադրված է մարմարե հուշակոթող, ինչը հայտնում է մեզ, որ Ցեցը եղել է Յոժեֆ Բեմ գորավարի ջոկատի հրամանատար, Պիշկի ճակատամարտի հերոս և Արգենտինայի զինվորական դպրոցի հիմնադիր:

Հոր մահից հետո, ով գլխավորել է Տրանսիլվանիայի Հուսարական զորքը, մայրը յոթամյա որդուն ուղարկում է Կեզդիվաշարիեյ Մեկեյի ազգային ռազմական գիշերօթիկ դպրոց: 12 տարեկանում նա սկսում է հաճախել

Վիներնոյշտատի ռազմական ակադեմիա, որտեղ աչքի է ընկնում իր ունակություններով: 1842թ. նշանակվում է լեյտենանտ և միայն ութը տարի անց կրկին հանդիպում է ընտանիքին: 1843թ. Տրանսիլվանիայում կարճատև ծառայությունից հետո տեղափոխվում է Բուդապեշտի 62-րդ հետևազոր: Միննույն ժամանակ վերապատրաստվում է նորաստեղծ ազգային գվարդիայում:

Իր ծառայության ընթացքում ձեռք բերած փորձի հիման վրա, 1844թ-ին գրել է «Հունգարիայի պաշտպանության օրենքները» աշխատությունը: Դա իր առաջին գիրքն էր այս թեմայով, այլև հզոր աշխատանք ներկայացնող հունգարական հրամանատարությունը:

1845թ. նա կրկին տեղափոխվում է Տրանսիլվանիա, որտեղ ընդունելության քննությունը հանձնելուց հետո 1846թ. որպես լեյտենանտ տեղափոխվում է Վինենայի Զինվորական-Աշխարհագրական ինստիտուտ: Այստեղ նա գերմաներեն է թարգմանում Էլեկ

Ֆենյեշի գրքերը: Մարտին տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով հրաժարվում է Ավստրիայի գլխավոր շտաբում իր հրաշալի ապագայից և իր ծառայությունն առաջարկում Հունգարիայի նորընտիր կառավարությանը: Մայիս ամսվա վերջին նա արդեն տեղափոխվում է Բուդապեշտի Պաշտպանության նախարարություն՝ որպես Ռազմական գործի դասախոս-կապիտան:



Օգոստոս ամսին հարավային շրջագայության ժամանակ ուղեկցում է պաշտպանության քարտուղարին: Այդ ժամանակ ի հայտ է գալիս նրա կազմակերպչական տաղանդը, ինչի շնորհիվ հետագայում ծառայությունը

շարունակում է Պաշտպանության կոմիտեյում: Նա նոր էր սկսել իր աշխատանքն այնտեղ, երբ ուղարկվեց Տրանսիլվանիայի ռազմաճակատ: Հոկտեմբերի վերջին մայրը Ցեցը ժամանում է Տրանսիլվանիա՝ որպես օգնություն տանելով վեց թնդանոթ և անփորձ հրաձիգներ: Ավելի ուշ երիտասարդ սպան հեռացվում է Տրանսիլվանիայի անփորձ, ազնվական սպաների կողմից: Ավստրիական հաղթանակների արդյունքում Տրանսիլվանիայի բանակը փախուստի է դիմում դեպի Հունգարիայի սահման: Յրված միավորումները Տրանսիլվանիայի սահմանի վերջին գյուղում կանգնեցվում են Ցեցի կողմից: Արդյունքում Կոշուր Լայոշը նշանակում է Ցեցին Տրանսիլվանիայի բանակի գլխավոր հրամանատար: Բարձր դիրք զբաղեցնող սպաների անախորժությունների պատճառով Ցեցը մղում է Կոշուրին հարգված ղեկավար ուղարկել այնտեղ: Այս պատճառով Կոշուրը այնտեղ է ուղարկում Բեմին՝ որպես



տրանսիլվանիական բանակի գեներալիսսիմուս: Բեմը Տրանսիլվանիա է ժամանում դեկտեմբերի սկզբին, այնուհետև նշանակում է Ցեցին փոխգնդապետ և, շնորհիվ Չուչայում ցուցաբերած կազմակերպչական շնորքի, գլխավոր աշխատակազմի ղեկավար: Այն բանից հետո, երբ պարտվում է Մեբենի ճակատամարտում հակառակորդի քանակական գերազանցության պատճառով, պաշտոնաթող է լինում:

Ավելի ուշ, Մեբենի օկուպացիայից հետո Բեմը հայտարարում է համաներման և հավասարության օրենք: Կոշուրը դեմ է կանգնում Բեմի ազգային քաղաքականությանը և կառավարության հանձնակատարի միջոցով պաշարում տեղի գյուղերը: Ցեցն ամբողջ ընթացքում Բեմի կողմնակիցն է եղել և այդ ժամանակ գործում էր կառավարության դեմ, ինչի պատճառով հանձնակատարները դեմ էին Ցեցի գնդապետ նշանակվելուն: Այնուամենայնիվ Բեմը նշանակեց Ցեցին Բանաթ շտաբի գլխավոր հրամանատար: Ցեցը պարզևատրվում է 3-րդ կարգի շքանշանով, ապա, գնդապետ նշանակվելուց հետո, ստանում նաև 2-րդ կարգի շքանշան:

Կապիտուլյացիայից հետո Ցեցը թաքնվում էր իր հարազատների մոտ, որից հետո Համբուրգ քաղաքում, որտեղ էլ նա 1850թ. հունիսին հրապարակում է գիրք Բեմի տրանսիլվանիական արշավանքների մասին: Այս գիրքը համարվում է Ցեցի դասական աշխատանքներից մեկը. Բեմի լավ մատենագրություն, օբյեկտիվ, անաչառ, լավ նյութ՝ ի հիշատակ մեր ազատագրական պայքարների:

Համբուրգից նա գնում է Փարիզ, որտեղ դառնում է հունգարական էմիգրացիայի առաջնորդներից

մեկը: Նա, հակառակ իր քաղաքական և ռազմական գործունեության արդյունքում ձեռք բերած պատվի և կոչման, ավելի համեստ էր ապրում: Աշխատում էր նաև որպես թարգմանիչ և լեզվի ուսուցիչ:

Չմոռանք թողնում է միգրացիոն քաղաքականությունը և սկսում տեխնիկական կարիերան՝ աշխատելով Ֆրանսիայի և Իտալիայի սահմաններին տեղակայված երկաթուղային թունելում: 1857թ. Մեվիլա կատարած պաշտոնական այցի ժամանակ հանդիպում է Արգենտինայի նախկին նախագահ Խուան Մանուել դե Ռոսասի դստերը, ում հետ էլ ամուսնանում է: Նա իր խաղաղ ընտանեկան և քաղաքացիական կյանքը թողնում է հանուն հայրենասիրության: 1859թ. Տելեկի Լապուն առաջարկում է Կոշուրին՝ Ցեցին ուղարկել Բուխարեստ, որպես նախարար: Հունգարիայի ազգային առաջնորդը Փարիզում մայիս ամսին որոշում է կայացնում Ցեցին Ռումինիայում նշանակելու վերաբերյալ, ով մեկնում է Ջենովա՝ Կոշուրից ցուցումներ ստանալու: Նա հաջողությամբ է լուծում իր առջև դրված բոլոր խնդիրները:

Խաղաղության հաստատումից հետո Ցեցն ընտանիքով մեկնում է Բուենոս Այրես: 1865թ. սկսում է աշխատել որպես Արգենտինայի ռազմական ինժեներ-գնդապետ: Ավելի ուշ դառնում է Պարագվայի դեմ պաշտպանության հրամանատար: Նա վերակազմավորում է բանակը, սակայն հիվանդության պատճառով չէր կարողանում մասնակցել մարտերին:

Այնուհետև իր աշխատակազմը հիմնադրեց ռազմական դպրոց, որտեղ 1870թ. նա սկսեց ռազմական վարժանքները: Ավելի ուշ նա դարձավ Էնտրե Ռիոս մարզի տեղագրական գրասենյակի տնօրենը, հետագայում՝ տեխնիկական բաժնի ղեկավար: Ցեցը հիմնադրում է նաև Բուենոս Այրեսի Ռազմա-աշխարհագրական ինստիտուտը: 1885-1895թթ. նա կրկին դառնում է հրամանատար և, միայն 30 տարվա ծառայությունից հետո, 73 տարեկան հասակում անցնում թոշակի:

Մինչդեռ 1868-ականների փոխզիջումներից հետո արտագաղթածների մեծամասնությունը վերադառնում են Հունգարիա, Ցեցը մնում է Արգենտինայում ռազմական մասնագիտության պատճառով:

1868թ. Պեշտում հունգարերն լեզվով նոր գիրք է թողարկում Տրանսիլվանիայի ռազմական արշավների մասին: Ցեցը, Հունգարիայից հեռու լինելով, շուտով մոռացության է մատնվում: 1887թ. Սամոշույվարի ուսուցիչ Կրիշտոֆ Սոնգոտը հայկական ամսագրի հիմնումով սկիզբ է դնում հայ-հունգարական բարեկամության զարթոնքին: Նույնիսկ առաջին համարում


վերակենդանացում է երկու հայ-հունգար հրամանատարների՝ Յանոշ Ցեցի և Կիշ Էռնոյի մասին հիշողությունը: 1891թ. ընթերցողին հայտնում են, որ հրամանատար Ցեցը դարձել է ամսագրի աշխատակազմի անդամներից: Հետագայում Սոնգոտը բազմիցս խնդրել է Ցեցին տուն վերադառնալ: Չնայած բոլոր խնդրանքներին՝ Ցեցը տուն չվերադարձավ, նա սպասում էր պաշտոնական հրավերի, ինչն այդպես էլ չստացավ: Նա հրավեր չստացավ կառավարության ազգային և հակաոցիալական քաղաքականության պատճառով: Ցեցը Սոնգոտին հղեց քաղաքական իր սկզբունքներով մի բաց նամակ, որտեղ փառաբանում էր ֆրանսիական հեղափոխությունը և հույս հայտնում, որ Հունգարիայի նոր սերունդը կկարողանա կյանքի կոչել Կոշուրի ծրագիրը Դունայի պետությունների կոնֆեդերացիայի վերաբերյալ: Սակայն նոր սերունդը վախենում էր ֆրանսիական հեղափոխության հաջողությունից, որդեգրում էր թնիկ ճնշման քաղաքականություն և չէր սիրում հերոսներին, ովքեր քարոզում էին հակառակ սկզբունքներ: Նա մշտապես հիշում էր Հայաստանը և վառ

պահում իր կյանքի մասին հիշողությունները: 1902թ. նա գրում է Սոնգոտին, որ, քանի կենդանի են իր ժառանգները, պետք է հարգել և ընտանեկան սրբության պես պահել հայկական գրքերը: Սոնգոտն այս բառերն օգտագործում է «Հայաստան» ամսագրի Ցեցի մահվանը նվիրված շապիկի վրա: Ամսագիրը փակվում է 1907թ. Սոնգոտի մահից հետո: Մեր ազատագրական պայքարի վերջին գեներալը, տրանսիլվանիական արշավանքների հերոսը մահանում է 1904թ. սեպտեմբերի 6-ին: Արգենտինայի գորահրամանատարի սգո երթը Ռացոլետա գերեզմանատանը գլխավորում էր իր առաջին աշակերտը, քանի որ վերջինս գիտեր, որ Ցեցի մահով իրենք կորցրեցին ակադեմիական բանակի հորը: Հունգարական մամուլը նույնպես հրաժեշտ տվեց Ցեցին՝ կրկին նրան մոռանալով: Նրա առաջադեմ հոգին բացահայտվեց ազատագրական պայքարի մարքսիստների գնահատման ժամանակ, ինչի արդյունքում էլ այժմ գոյություն ունի փողոցի անունը, որը նրա մասին հիշեցնում է գալիք սերունդներին:

Ադրիան Հերցեգ

ՀՐԱԺԵՇՏ ՄՈԼԴՈՎԱՆ ԿՐԻՇՏՈՖԻՆ

Հարգելի՛ ընկերներ, Ինչպես ասել է Մորից Ժիգմոնդը, մահը կարող է ունենալ միայն կարեկցանք: Դոկտոր Մոլդովան Կրիշտոֆը, ում մենք ցավով հրաժեշտ տվեցինք, դեռ վաղ տարիներին ասում էր, որ գեղեցիկ կյանք է ունեցել: Մոլդովան Կրիշտոֆը վաղ տարիքում կորցրել է հորը և մնացել մոր, երկու քույրերի հետ: Իրենց ապրուստն ապահովում էր իրենց մնացած ներկերի գործարանում: Երբեմն դասերից բացակայում էր, քանի որ պետք է աշխատեր, սակայն ուներ հրաշալի ուսուցիչներ և համարվում էր դասարանի լավագույն աշակերտը: Մոր կամքով դուրս է գալիս 2-րդ Համաշխարհային պատերազմի դժոխքից և մեկնում Բուդապեշտ՝ սովորելու տեխնոլոգիական համալսարանում: Մանկության որոշ ընկերներ հետևեցին նրան, ում հետ մինչ մահ եղել են լավ ընկերներ: Տրանսիլվանիայում հայկական կյանքը կոփել էր նրանց և գաղափարական ամրություն տվել ողջ կյանքի ընթացքում: Մեր Կրիշտոֆն ստեղծագործ ինժեներ էր: Ահա թե



ինչու եմ մեջբերում հայ բանաստեղծ Գևորգ Էմինի խոսքերը: «Դոկտոր Մոլդովան Կրիշտոֆը ոչ միայն ինժեներ էր, այլև մարդ ով սիրում էր պոեզիան»: Նա շատ էր սիրում իր մոր գեղեցիկ ստեղծագործությունները և անգամ 80 տարի անց անգիր հիշում էր: Նա չէր պատկանում որևէ քաղաքական կուսակցության, սակայն իր գիտելիքներն ու կապը գործընկերների հետ շատ էր գնահատվում քաղաքական էլիտայի կողմից: Թե՛ Տրանսիլվանիայում, թե՛ Հունգարիայում հեշտ չէր հայ լինելը: Նա անփոխարինելի դեր ունեցավ Օրլայ փողոցի եկեղեցու վերանորոգման և շահագործման գործում: Շնորհիվ իր խելացի և տրամանաբանական մտածողության աջակցել է առաջին հայկական ինքնավարության հիմնադրմանը: Նա Հունգարիայի Հայկական Առաքելական եկեղեցու նախագահն էր և կատարել է իր պարտականությունները մինչև մահ:

Ալեքս Ավանեսյան

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅՈՒՐԲԻԿ-Ը ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈՒՐԲԻ

2012թ. Սեպտեմբերի 7-ին ՀՀ-ը Ռամիլ Սաֆարովի արտահանման հետ կապված հայտարարեց ասուլիս, որին ներկա էին Հունգարիայի գրեթե բոլոր լրատվամիջոցները: Ասուլիսի ընթացքում դոկտոր Սարգսյան Սևանը



նշեց, որ տեղի ունեցածն անթույլատրելի քայլ էր Հունգարիայի կառավարության կողմից և դա իրեն չի զարմացնում: Քննադատելով ՅՈՒՐԲԻԿ կուսակցությանը՝ նա ասաց, որ վերջինս Ադրբեջանից ֆինանսական օգնություն է ստանում և արդեն երկար ժամանակ է, ինչ հակահայկական քարոզներ է անում պառլամենտում, և դրան հետևելով կառավարությունը, զայթակղվելով այդ «յուրոտ պատառով», որոշեց ինքն էլ

օգտվել՝ ավելի մեծ ժեստ ցույց տալով: Կարճ ժամանակ անց ՅՈՒՐԲԻԿ կուսակցությունը Հայկական Ինքնավարության նախագահի դեմ դատական գործ հարուցեց: Երեք դատալսումներից հետո հայքը մերժվեց, անհիմն լինելու հետևանքով: Այս առիթով ՀՀ նախագահ Սարգսյան Սևանը տվեց պարզաբանումներ «Դիսպոթա 21» հայկական ամսագրի խմբագիր Արթին Դիրամերյանի հետ հարցազրույցում: Դ.Ա.- Ի՞նչ հիմքով էր ՅՈՒՐԲԻԿ կուսակցությունը հայց ներկայացրել դատարան:

Ս.Ս.-Իր համբավի և բարի անվան ոտնահարման համար, ինչպես նաև բողոք էր ներկայացրել, թե զրպարտում էմ իրենց՝ ասելով, թե ֆինանսական աջակցություն են ստանում Ադրբեջանից, քանի որ ըստ Հունգարիայի օրենսդրության տեղի կուսակցություններն իրավունք չունեն այլ երկրներից ֆինանսական աջակցություն ընդունել:

Մեզ համար ավելի քան զարմանալի է, թե ինչու պետք է ՅՈՒՐԲԻԿ-ը վիրավորվի իմ արտահայտությունից և անհանգստանա, թե ոտնահարել էմ իրենց բարի անունն, այն դեպքում, երբ ողջ Եվրոպայում է հայտնի իր ազգայնամոլությամբ, ռասիստական և ցուցամոլական շարժումներով, ինչպես նաև արդեն իսկ հայտնի է վատ համբավով: Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանի կողմից ֆինանսական

աջակցություն ստանալուն, նշեմ, որ ես երբևէ չեմ ասել, թե առձեռն գումար են վերցնում, փոխարենն ասել եմ, որ ֆինանսական հովանավորություն ունեն: Ինչպես արդեն մանրամասնել եմ դատարանում, ֆինանսական հովանավորություն է համարվում նաև այն, որ ՅՈՒՐԲԻԿ կուսակցության ղեկավարներն իրենց ընտանիքներով մշտապես հանգստյան են մեկնում Բաքու: Եվ չնոռանանք անցյալ տարվա ադրբեջանական շարժումների ընթացքում ՅՈՒՐԲԻԿ-ի ակտիվությունը, ինչն էլ խոսում է շատ բաների մասին:

Դ.Ա.- Ի՞նչ նկատի ունեք:

Ս.Ս.- Հերիք է միայն հիշել այն, թե նախորդ տարիների ընթացքում ՅՈՒՐԲԻԿ-ի անդամները քանի անգամ պառլամենտում ձայն բարձրացրեցին հայերի դեմ՝ հայերին և հայկական բանակը ներկայացնելով որպես ագրեսորների: Դատապարտել են 1992թ. Խոջալույում տեղի ունեցածը՝ ներկայացնելով ադրբեջանական կեղծ հիմքեր: Նշեմ նաև, որ մշտապես ցուցաբերել են կողմնապահական վերաբերմունք՝ երբևէ հաշվի չառնելով հայկական կողմից ներկայացվող փաստերը: Հիշեցնեմ, որ ՅՈՒՐԲԻԿ-ին հակված լրատվամիջոցները մշտապես և շատ ակտիվ հակահայկական պրոպագանդաներ են անում, և կեղծիքը հասել էր այն մակարդակի, որ անգամ անախորժություններ էր առաջացրել հենց կուսակցության ներսում:

Նրանք, ովքեր պատմություն գիտեն, տեղյակ են, որ Արցախը Հայաստանի համար ներկայացնում է նույն արժեքն, ինչ Տրանսիլվանիան՝ Հունգարիայի: Չնայած պատմական այս փաստին՝ ՅՈՒՐԲԻԿ-ամետ լրատվամիջոցները ներկայացնում են, իբրև Ղարաբաղն Ադրբեջանի համար է արժեք, ինչը ցույց է տալիս նաև նրանց տգիտության մակարդակը: Այս կատարյալ նոստենսը վրդովմունք էր առաջացրել նաև կուսակցության մի քանի խելամիտ անդամների մոտ: Կան այնպիսի մարդիկ, ովքեր եղել են Ղարաբաղում և, ինչպես իրենք են ասում, տեսել են հազարամյակների պատմություն ունեցող հայկական քրիստոնեական եկեղեցիներ և կոթողներ, իսկ ի հակառակ ադրբեջանցիների՝ չեն տեսել նրանց պատկանող որևէ պատմական արժեք ունեցող համալիր կամ նմուշ: Բոլորս էլ գիտենք, որ այդ հողված գրող լրագրողն իր ամառային արձակուրդներն անց է կացրել Բաքու քաղաքում, և արդեն պարզ է դառնում, թե ով է այդ տողերի իրական հեղինակն ու պատվիրատուն:

Դ.Ա.- Առաջին դատավճռով մերժվեց ՅՈՒՆԻԿ կուսակցության հայքը դրանով ապացուցելով Ձեր ճշմարտացի լինելը: Ինչպե՞ս հիմնավորեց դատավորն իր վճիռը:

Ս.Ս.- Չնայած նրան, որ նման դեպքերում ամեն ինչ շատ արագ է տեղի ունենում Հունգարիայիում՝ այս անգամ գործի վերաբերյալ կայացան լուսմների երեք օր, և դատավորը մանրամասն քննեց հայցվոր և պատասխանող կողմերին: Մենք բավականին լուրջ փաստաթղթեր, ինչպես նաև տարբեր լրատվական արխիվներից փաստեր ներկայացրեցինք, որոնք ակնհայտ ցույց էին տալիս հակահայկական քայլերը, աղբրեջանամետ գործողություններն ու քարոզները:

Դատարանի վճռում ասվում է, որ գոյություն ունի ազատ խոսքի, կարծիքներն ազատ

արտահայտելու իրավունք, և ՅՈՒՆԻԿ կուսակցության բոլոր կողմնակալ գործողությունները հիմք են տալիս եզրակացնել, որ ՅՈՒՆԻԿ-ի և Աղբրեջանի միջև համատեղ լոբբիական հետաքրքրություն գոյություն ունի:

Պետք է նշել նաև, որ այս կուսակցությունը հայտնի է իր գործ հարուցելու մոլուցքով, ինչպես նաև դատարանից հաղթանակած դուրս գալով, սակայն այս դեպքը նրանց համար վատ անակնկալ էր և զայրույթ առաջացրեց: Այժմ սպասում ենք երկրորդ փուլին, քանի որ տեղյակ ենք, որ ՅՈՒՆԻԿ-ի փաստաբանը պատրաստվում է բողոքարկել վճիռը:

Արթին Դիրամերյան

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Մեյստեմբերի 28-ին սպա Գուրգեն Մարգարյանի ծննդյան օրն էր և հենց այդ օրն էլ Երևանի Լենինգրադյան փողոցում բացվեց նրա հուշարձանը:

Հուշակոթողի հեղինակը քանդակագործ- ճարտարապետ Մերժ Մեհրաբյանն է. կողք կողքի վեր պլացող ու հավերժությունը խորհրդանշող ցորենի հասկերով պուների միջև վեր է խոյանում հայ սպայի կիսանդրին՝ հայացքն ուղղած դեպի հավերժություն: Կիսանդրու պյան ստորին հիմքում անմար կրակն է պատկերված, իսկ պատվանդանի առջևում՝ դարձյալ հավերժության խորհրդանիշների կողքին, փորագրված է՝ «Հայ ժողովրդի կողմից» և «ՀՀ Զինված ուժերի սպա Գուրգեն Մարգարյան»:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության խորհրդարանի Բրիտանահայկական համակուսակցական խորհրդարանական խմբի նախագահ, Բարոնուհի Քերոլայն Քոքսը անձամբ իր մասնակցությունն էր բերել Գ.Մարգարյանի կիսանդրու բացման հանդիսավոր արարողությանը:

Բարոնուհին վտանգավոր է համարել Աղբրեջանի քաղաքականությունը, որ Ռամիլ Մաֆարովը հերոսացնում է՝ դրանով աստելություն է սերմանում իր երիտասարդների մեջ դեպի հայր: Նա ասել է, որ երկու բան կա, որ երբեք չպետք է, մոռանալ, որ Հայոց բանակի սպան սպանվել է քնած ժամանակ և այդ դեպքը չպետք է երբեք մոռացվի պատմության ընթացքում և երկրորդ՝



բոլորը, ում ես ճանաչում էի, խորը շոկ էին ստանում այն փաստից, որ Աղբրեջանն իր սերունդներին, այսինքն՝ մարդասպանին վերաբերվել որպես հերոս: Իսկ շարունակելով խոսքը ասել է, որ ինչ վերաբերվում է նույն դեմոկրատ Եվրոպայի մաս կազմող Հունգարիայի՝ մարդասպանին արտահանձնելու քայլին, ապա

բարոնուհի Քոքսը նկատում է, որ Հունգարիայում նրան ցմահ բանտարկության էին դատապարտել, ինչը արդարացի պատիժ էր: Ես չգիտեմ ինչու է նա վերադարձրել Աղբրեջան, բայց Աղբրեջանը խոստացել էր, որ Մաֆարովը շարունակելու է բանտարկված մնալ Աղբրեջանում: Աղբրեջանն է, որ կորցրել է վստահությունը բոլորի մոտ և իր տված խոսքը չի կատարել:

Բարոնուհի Քերոլայն Քոքսը դիմելով Հայաստանի ու Արցախի ժողովրդին՝ ասել է, որ «Խոր համակրանք ունեմ հայ ժողովրդի՝ Հայաստանի ու Արցախի ժողովրդի նկատմամբ, դուք ոչ միայն շարունակում եք ապրել, դուք փլատակներից գեղեցկություն եք ստեղծել: Ոչինչ չի կարող հետ բերել Գուրգեն Մարգարյանին, բայց նրա ոգին երբեք չի մեռնի, և այս հրաշալի հուշարձանը միշտ կհիշեցնի մարդկանց հայ սպայի քաջագործությունների մասին: Աղոթելու եմ, որ ձեր երեխաները մեծանան խաղաղության մեջ, այն խաղաղության, ազատության և արդարության, որի համար հայ ժողովուրդը շատ մեծ գին է վճարել»:

Համադրեց՝ Ս. Սուսանյան

ԸՄԲՇԱՄԱՐՏԻ 2013 Թ. ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի Պապպա Լասլո մարզահամալիրում սեպտեմբերի 16-22-ին, տեղի ունեցավ ըմբշամարտի աշխարհի առաջնությունը: Հունգարիայի ամենամեծ փակ մարզահամալիրը կրում է ` եռակի օլիմպիական չեմպիոն Պապպա Լասլոյի անունը, համալիրը ընդունում է 12 500 հանդիսատես: Մարզահամալիրը հյուրընկալեց 87 երկրիներից ժամանած մարզիկների: Մրցաշարի առաջին օրը Հայաստանի հավաքականը ներկայանում էր 55, 66, և 96 կգ քաշային կարգերում: Եվ Ճիշտ մրցաշարի առաջին օրը սեպտեմբերի 16-ին, մարզահամալիրի մրցագորգում ծածանվեց հաղթական Հայոց եռագույնը: 24-ամյա Դավիթ Սաֆարյանը 66 կգ քաշային կարգում դարձավ ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոնը: 11 տարվա ընդմիջումից հետո Հայաստանը ազատ ըմբշամարտի աշխարհի չեմպիոնի կոչումը ստացավ Բուդապեշտում: Ուրախության և ոգևորության աղաղակներ էին ողջ մարզադաշտում: Հրաշալի ապրումներ ունեցան ոչ միայն մարզադաշտում գտնվող հունգարահայերը, այլ նաև Չեխիայից ժամանած մեր հայրենակիցները: Սեպտեմբերի 20-ին սկսվեց հունահռոմյական ոճի ըմբշամարտի մրցաշարը: Մրցադաշտ մտավ Հայաստանի հավաքականի 55 կգ քաշային կարգում Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի կրկնակի չեմպիոն Ռոման Ամոյանը: Հայաստանը նվաճեց իր երկրորդ մեդալը՝ այս անգամ բրոնզով: Այս քաշային կարգում Հունգարիայի հավաքականի ներկայացուցիչը նույնպես նվաճեց երրորդ տեղ: Այս հաղթանակը

Հունգարիայում ապրող հայերի համար կրկնակի ուրախություն և մեծ հպարտություն էր, քանզի կողք կողքի դրվեցին Հայաստանի և Հունգարիայի հաղթական դրոշները: Հաջորդ օրը մրցագորգ դուրս եկան 60 կգ քաշային կարգում հանդես եկող Ալեքսան Միքաելյանը, 84 կգ Մաքսիմ Մանուկյանը և 96 կգ Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Լոնդոնի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Արթուր Ալեքսանյանը: Արթուր Ալեքսանյանի մարտերը մինչև եզրափակիչ փուլ, մեծ խանդավառություն էին ստեղծել, նա շատ հանգիստ կարողացավ հասնել եզրափակիչ փուլ: Հունգարիայի խոսնակը մշտապես գովեստի հատուկ խոսքերով էր ներկայացնում Ա. Ալեքսանյանին, որպես տաղանդավոր երիտասարդ մարզիկ, ներկայացնում էր մարզիկի բարձր կարողությունները, սակայն Ա.Ալեքսանյանի մարտն ավարտվեց անհասկնալի ձևով: Եզրափակիչում Ա.Ալեքսանյանը պարտվեց ռուս մարզիկ Նիկիտա Մելնիկովին: Մրցավարների անարդար որոշումը իսկապես շատ հիասթափեցնող էր: Ա.Ալեքսանյանը դարձավ աշխարհի փոխչեմպիոնը, իսկ մեզ հայերիս համար՝ չեմպիոնը: Մրցաշարի վերջին օրը Հայաստանի հավաքականից հանդես եկան 66 կգ քաշային կարգում Սասուն Ղամբարյանը, 74 կգ քաշային Օլիմպիական փոխչեմպիոն Արսեն Ջուֆալակյանն ու 120 կգ քաշով Վաչիկ Եղիազարյանը: 74 կգ քաշային կարգում միայն Ա. Ջուֆալակյանին հաջողվեց բրոնզե մեդալակիր դառնալ Բուդապեշտում ավարտված հունահռոմյական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունում: Այսպիսով, հունահռոմյական ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանի հավաքականը նվաճեց երեք մեդալ. Ա.Ալեքսանյանը՝ արծաթ, Ռ.Ամոյանն ու Ա.Ջուֆալակյանը դարձան բրոնզե մեդալակիրներ: Իսկ Հունգարիայում ապրող հայերի համար, ըմբշամարտի աշխարհի 2013 թ. առաջնությունը դարձավ Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդաձի օրերին զուգադիպող անմոռանալի տոն:

Ս. Սուսանյան




Örmény könyvek **20%** kedvezménnyel

a Stúdió könyvesboltban


1138 Budapest, Népfürdő u. 15/D. • Nyitva: hétfő-csütörtök 8-16 óra, péntek 8-15 óráig

E-mail: titkarsag@studio-pe.hu




Nahapet

Hracsja Kocsar
216 oldal, ár: 2100 Ft




Az Eufrátesz hídján

Hracsja Kocsar
376 oldal, ár: 3000 Ft




Örmény nyelvkönyv I.

Dzsotjan Gagik – Krajcsir Piroska
164 oldal, ár: 1500 Ft




Örmény utónevek

Dzsotjan-Krajcsir Piroska
104 oldal, ár: 1500 Ft




Tanulmányok az örmény népirtás témaköréből

192 oldal, ár: 1500 Ft




Tükörcserepek

Krajcsir Piroska
120 oldal, ár: 1690 Ft



Szaszuni Dávid

Hovhannesz Thumánján
88 oldal, ár: 2000 Ft



The Armenian Heroes of The Hungarian War of Independence In 1848-49

100 oldal, ár: 1000 Ft



Hős Nazar

Derenik Demircsjan
190 oldal, ár: 1000 Ft

A könyvek korlátozott példányszámban, a készlet erejéig megrendelhetők és megvásárolhatók.
(Utánvétel esetén a postaköltség 1700 Ft)

